Հայ Փոստ
Հայաստանի Փոստ

Ել. – ՀՓ 1858-2026
«23» հունվար 2026թ.
ք. Երևան

#քոմարդիկամենուր

«ԷՔՍՊԵՐՏ ՕՑԵՆԿԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԱՐՍԵՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ
(Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց պ. 5 շենք 419
Հեռախոս՝ (+374) 98660002
Էլ.հասցե՝ arsbarseghyan@mail.ru)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Համաձայն 2026 թվականի մարտի 30-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հիմնական միջոցների վերագնահատման ծառայությունների մատուցման թիվ «ՀՓ-ԳՀԾՁԲ-26/27» ծածկագրով գնման Պայմանագրի՝ (այսուհետ՝ Պայմանագիր) Կատարողը պարտավորվել է կատարել Պայմանագրով նախատեսված ծառայությունները պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի պահանջները, մասնավորապես՝ Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցումը չի իրականացվել Պայմանագրի N 1 հավելվածով՝ (տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) սահմանված ժամանակացույցին համապատասխան:

«Հայփոստ» ՓԲԸ
ՀՀ, 0061, Երևան, Արշակունյաց 65/5
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսքիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2.1.2-րդ և 2.1.3 կետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: *Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝*

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 Հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի 7.9 կետով սահմանված է, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Պայմանագրի որակավորման ապահովման գումարը կազմում է 147.000 (մեկ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.2 կետի, և պայմանագրի ապահովման գումարը կազմում է 98.000 (իննսունութ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.3 կետի, որոնք անհրաժեշտ է փոխանցել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **«1930003703150100»** հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Պայմանագրի պայմանագրի և որակավորման ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները փոխանցվի Պատվիրատուի կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**